

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ԱՆԳԼԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՊՍԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԹՈՒՄԱՅԱՆԻՆ ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ,
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ
ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

**ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՊՍԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ԹՈՒՄԱՅԵԱՆ,
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿԻՆ ՀԱՅՈՑ ԱՆԳԼԻՈՅ,
ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՅ ՀԱՐԱԶԱՏԻ, ՈՂՋՈՒՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ, Ի ԳԱՀԷ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ
ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԵՒ Ի ԳԱՀԱԿԱԼԷ ՆՈՐԻՆ**

Միածին Որդին Աստուծոյ և Փրկիչը մեր Քրիստոս, Իր նախախնամող սուրբ կօրութեամբ, միշտ հաստատ և անշարժ պահած է Իր իսկ հիմնած Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և Հայաստանեայց Եկեղեցին, Ս. Գրիգոր Լուսաւորչի երանելի օրերէն մինչև մեր ժամանակները:

Այսօր ալ անշարժ ու հաստատ են անոնք: Ամէն տեղ շէն ու պայծառ են մեր աղօթքի տաճարները, կենդանի է և կենսունակ մեր հաւատացեալ ժողովուրդը, նուիրեալ ծառայութեան մէջ են մեր հոգևոր մշակները, իբրև ժիր մատռուակներ:

Հայ Եկեղեցին առաւել կը կօրանայ ու կը ծաղկի, և առաւել կը ծառայէ իր սուրբ կոչումին, շնորհիւ իր ճշմարտապէս հաւատաւոր ու անձնուէր մշակներուն:

«Քանի՞ մ մեր յոյս, կամ խնդութիւն կամ պսակ պարծանաց մերոց, եթէ ոչ դուք ի Տէր» (Ա Թեսաղ. Բ 19):

Հոգեկան ուրախութիւն է Մեզի համար հաստատել, թէ Ձերդ Սրբազնութիւնը իր պատուաբեր տեղը գրաւած է մեր Եկեղեցւոյ ուխտապահ սպասաւորներու հոյլին մէջ, ահա բաղում տարիներէ ի վեր:

Ցիրաւի, Դուք, սիրելի՛ սրբազան, երկար տարիներ ծառայելէ յետոյ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց նուիրական յարկին տակ, աւելի քան տասը տարիներէ ի վեր Ձեր աշխատանքը և Ձեր հոգևոր եռանդը կը նուիրաբերէք, իբրև Մեր պատուիրակը Անգլիոյ մէջ և իբրև առաջնորդ հովիւը Ձեր երկրի հայոց:

Մենք Ձերդ Սրբազնութեան մէջ կը տեսնենք Ձեր բարի ու խաղաղ հոգին, շնորհալի սպասաւորը սուրբ սեղաններուն, անձնուէր առաջնորդը հաւատացեալ հօտին և հաւատարիմ ու արթուն ներկայացուցիչը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:

Մենք սիրով է, որ կը վկայենք այս բոլորի մասին և, ի նշան Մեր անկեղծ գնահատանքի, այսու հայրապետական կոնդակաւ, Ձեզի կը շնորհենք **արքութեան պատիւ**, մաղթելով, որ ապրիք ու գործէք երկար տարիներ, միշտ քաջառողջ, և մինչև խոր ծերութիւն նուիրումով ու քաջութեամբ ծառայէք մեր Ս. Եկեղեցիին, մեր ժողովուրդին և Ս. Էջմիածնին: Զի ա՛յս է կեանքի իմաստը և նպատակը ճշմարիտ հայ հոգևորականի և անոր փառքի յաղթական ճամբուն:

«Խոնարհեցարուք առաջի Տեառն՝ և բարձրացուսցէ զձեզ» (Յակոբ. Դ. 10):

Փրկչի Իշման լոյս Տաճարէն, սիրոյ ողջո՛յն և աստուածային օրհնութի՛ւն Ձերդ Սրբազնութեան և հայ հաւատացեալ ժողովուրդին, որ ի Լոնդոն և ի Մանչեստր:

«Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ոգւոյդ ձերում»:

Ամէն:

Տուաւ կոնդակս ի 20-ն յունուարի
1964 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԺԳ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ